

Հարգելի հյուրեր,

Տիկնայք և պարոնայք:

Ողջունում եմ բոլորիդ և մաղթում մեր այս սեմինարին արդյունավետ ընթացք:

Խորին շնորհակալությունս եմ հայտնում Ամերիկյան իրավաբանների ընկերակցության հայաստանյան գրասենյակին, որի աջակցության շնորհիվ հնարավոր դարձավ այս կարևոր միջոցառման իրականացումը:

Ի՞նչն եմ հատկապես կարևորում սպասվելիք այս քննարկման մեջ:

Դատաիրավական բարեփոխումները, որ նախաձեռնել է այսօր մեր երկիրը, ունենալու են հստակ ձեվակերպված մի նպատակ՝ բարեփոխվող արդարադատական համակարգը դառնալու է Հայաստանի քաղաքացիների համար արդարության եվ իրենց իրավունքների վերականգնման հուսալի եվ կանխատեսելի ատյան: Սա է լինելու մեր գործունեության գերնպատակը, բոլոր դատավորներին աշխատանքի արդյունավետության միակ չափորոշիչը:

Ես համոզված եմ, որ հասարակության այս պատվերի հասցեատերերը՝ դատավորները, հրաշալի հասկանում են իրենց առջեվ ծառայած այս խնդրի կարեվորությունը եվ իրենց պատասխանատվությունը այդ խնդրի լուծման համար: Միաժամանակ ուզում եմ հավատալ, որ դատավորները կգործադրեն իրենց լավագույն ջանքերը ամրապնդելու, իսկ որոշ դեպքերում նաեվ վերականգնելու մարդկանց հավատը արդարադատության նկատմամբ:

Այս առումով հատկապես կարեվորում եմ այս գիտաժողովի քննարկման առարկան՝ դատավորի վարքագծի կարեվորագույն կանոններից մեկի՝ դատավորի միակողմանի շփման արգելքի կանոնը:

Հայաստանի դատավորների միության նախորդ տարվա հոկտեմբերի 10-ին տեղի ունեցած ընդհանուր ժողովում, իսկ այնուհետեվ նաեվ՝ դատարանների նախագահների խորհրդում քննարկվեցին եվ հավանության արժանացան դատավորի վարքագծի միասնական կանոնները, որոնք պարտադիր դարձան Հայաստանի յուրաքանչյուր դատարանի համար:

Համաձայն այդ կանոնների՝ դատավորը պարտավոր է դրսևորել վարքագծի բարձր չափանիշներ՝ ապահովելով արդարադատության համակարգի նկատմամբ հասարակության վստահությունը, ինչպես նաև պարտավոր է իր վարքագծով

ինչպես դատարանում, այնպես էլ նրանից դուրս ամրացնել կողմերի, իրավաբանական հանրության և հասարակության հավատը դատավարության, դատավորի և արդարադատության մարմինների անկողմնակալության, անկախության և արդարության հանդեպ: Արդարադատությունը պետք է իրականացվի տեսանելի, բաց, թափանցիկ եվ համոզիչ: Արդարադատության իրականացման արդյունքը հասարակության եվ դատավարության կողմերի համար պետք է ընկալվի իբրև արդարության հաստատում:

Եվ նման արդարադատության կայացման ճանապարհին չափազանց կարեվոր է դատավորի կողմից գործով կողմերի, դատավարության մասնակիցների հետ առանձին շփումներից եվ հանդիպումներից ձեռնպահ մնալու կանոնի պահպանումը: Նման շփումներն ու դրանց հետեվանքները խաթարում են հասարակության վստահությունը դատարանների նկատմամբ եվ որ ամենավտանգավորն է, սպառնում են անձանց արդար դատաքննության իրավունքի խախտմամբ, նույնիսկ եթե այդ անձինք վերջնական արդյունքում ստանում են իրենց համար բարենպաստ դատական ակտ:

Գտնում եմ, դատավորը պարտավոր է չնախաձեռնել, թույլ չտալ և հաշվի չառնել առանց դատավարության հակառակ կողմի կամ նրա փաստաբանի մասնակցության, դատախազի, դատավարության մյուս կողմի կամ նրա փաստաբանի հետ շփումները, ինչպես նաև պարտավոր է բացառել առանց դատավարության կողմերի մասնակցության որևէ այլ անձի հետ իր շփումները, որոնք վերաբերում են դատավորի կողմից քննվող գործին: Այս կանոնը, իհարկե, պետք է ունենա բացառություններ: Բայց դրանք կարող են լինել ոչ ավելի, քան հետևյալ դեպքերում.

1. Երբ հանգամանքների բերումով ընդդիմազերծ շփումներն անհրաժեշտ են կազմակերպական նպատակներով, ինչպես օրինակ նիստի ամսաթիվը և ժամը համաձայնեցնելու կամ նմանատիպ այլ անհետաձգելի դեպքերում, և այն պայմանով, որ շփումները չեն վերաբերի գործի էությանը և դրանց արդյունքում դատավարության կողմերից մեկը չի ստանա դատավարական կամ այլ առավելություն մյուս կողմի նկատմամբ: Այս դեպքում դատավորն անհապաղ պետք է հայտնի այդ շփումների բովանդակությունը մյուս կողմին՝ վերջինիս հնարավորություն տալով արձագանքելու:

2. Երբ դատավորը կիրառելի իրավունքի վերաբերյալ դիմում է գործի ելքով չչահագրգռված մասնագետի՝ պայմանով, որ կողմերը տեղեկացվեն մասնագետի ինքնության և նրա տեսակետի վերաբերյալ, ինչպես նաև հնարավորություն ունենան այդ տեսակետի վերաբերյալ իրենց կարծիքը ներկայացնելու:

3. Երբ դատավորը իր վարույթի գործով խորհրդակցում է այլ դատավորների կամ դատարանի աշխատակազմի այն աշխատակիցների հետ, որոնց գործառույթը դատավորին դատական իշխանություն իրականացնելիս օժանդակելն է:

Ասածս վերաբերում է ինչպես բանավոր, այնպես էլ գրավոր շփումներին:

Այս ամենը չի վերաբերում անորոշ ապագային: Այս պահանջները դատավորների նկատմամբ կիրառելի են այսօր արդեն, վարքագծի գործող կանոնագրքի կարգավորումներին համապատասխան:

Հարկ եմ համարում արձանագրել, որ մենք այսօր խնդիր ենք դրել սահմանել արդյունավետ վերահսկողական համակարգ դատավորների կողմից վարագծի կանոնների պահպանման նկատմամբ, եվ մասնավորապես ex-parte հաղորդակցության արգելքի կանոնի պահպանման նկատմամբ:

Ցանկացած դեպք, որը կարձանագրվի համապատասխան ահազանգի արդյունքում, կհիմնավորվի համապատասխան փաստերով, պարտադիր քննարկման առարկա կդառնա դատավորների համապատասխան ինքնակառավարման մարմինների կողմից: Ընթացիկ վերահսկողության հարցերով կգրադվի ԴՆԽ էթիկայի հանձնաժողովը, իսկ կոպիտ խախտումները քննարկման առարկա կդառնան արդարադատության խորհրդում:

Ավելին, մենք պետք է վերահսկենք, որպեսզի նմանատիպ վարքագիծ պահպանվի նաև դատարանի աշխատակազմի և այլ անձանց կողմից, որոնք գտնվում են դատավորի ղեկավարության կամ վերահսկողության ներքո:

Դատավորի վարքագծի նորմերի հետ անհամատեղելի այս արատավոր երևույթից պետք հրաժարվենք բոլորս միասնաբար:

Մենք միշտ պետք է հիշենք, որ նույնիսկ առաջին հայացքից անվնաս կամ անմեղ հանդիպումը որեվէ կողմի հետ, թեկուզ մեկ գավաթ սուրճի ըմպումը մի կողմի փաստաբանի, կամ դատախազի, կամ պաշտպանի հետ նիստից անմիջապես առաջ, կարող է մյուս կողմի մոտ ստեղծել դատարանի կողմնակալության տպավորություն եվ խաթարել վերջնական արդյունքում

արդարադատության էությունը: Ես չեմ ասում արդեն այնպիսի անթույլատրելի եվ կոպտագույն խախտումների մասին, որոնք ցավոք սրտի մեր մոտ դեռեվս վերացված չեն, ինչպիսիք են գործի հանգամանքների եվ տվյալների քննարկումը կողմերից մեկի հետ առանձին, անկախ այն հանգամանքից ով է այդ կողմը՝ պետական մարմին է, պաշտպանական կողմի փաստաբանն է, դատախազն է, թե որեվէ այլ մասնակից:

Ցանկացած նման խախտում պետք է դիտվի որպես վարքագծի կանոնների կոպիտ խախտում եվ առաջացնի որոշակի պատժատեսակների կիրառում տվյալ դատավորի նկատմամբ: Էթիկայի հանձնաժողովը, ԱԽ կարգապահական հանձնաժողովը, արդարադատության խորհուրդը եվ անձամբ ես մեր ամենօրյա գործունեության առարկա ենք դարձնելու այս խնդիրը եվ անելու ենք ամեն ինչ վարքագծի այս կանոնը համապարտադիր կիրառելի կանոն դարձնելու համար:

Ամփոփելով խոսք, ցանկանում եմ մեկ անգամ ևս կարեվորել այս միջոցառման թեման, քանի որ այս կանոնի կատարման մակարդակը կախված է նաեվ այն հանգամանքից, թե ինչ մանրամասնությամբ եվ խորությամբ մենք դատավորներին կպարգաբանենք այս երեվույթի իմաստը:

Այդ իսկ պատճառով ես ցանկանում եմ հաջողություն մաղթել մեր աշխատանքներին, սա այդ ուղղությամբ առաջին քայլն է, սակայն ոչ վերջինը:

Շնորհակալություն